

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԵՐԿԵՐԻ ՎԱՎԵՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Միջնադարյան հայ մատենագրության ամենահետաքրքրական և խորհրդավոր հեղինակներից մեկի՝ Դավիթ Անհաղթ փիլիսոփայի (V-VI դդ.) անունով մեզ են հասել տարաբնույթ, ամենայն հավանականությամբ տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների կողմից գրված և թարգմանված երկեր։ Հայագիտության մեջ բազմիցս քննվել է դրանց հեղինակային պատկանելության և վավերականության հարցը՝ առաջադրվելով իրարամերժ և տարակարծիք տեսակետներ։ Սույն հոդվածում անդրադառնալու ենք Դավիթ Անհաղթի գրական ժառանգությանը ոչ թե ժամանակակից գիտական մոտեցման, այլ միջնադարյան ընկալման տեսանկյունից՝ հիմնականում քննելով նրան երկերի վերագրման սկզբունքները և հնարավոր պատճառները։

Դավիթ Անհաղթը «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի» երկի սկզբում խոսում է հեղինակային պատկանելության, երկերի վավերականության և իսկության մասին՝ առաջ քաշելով երկերի կեղծումների հնարավոր չորս պատճառ¹։ Նա կարևորում է ցանկացած գրվածքի հավաստիության քննությունը՝ միառժամանակ փաստելով, որ ընթերցողները գոհունակությամբ են կարդում հանրաճանաչ հեղինակների գործերը։ Ըստ այդմ, քանի որ ոչ բոլորը կարող են տարբերել սուտն ու ձշմարիտը, օգտակարն ու անօգուտը՝ երկերն ընտրում են

¹ Նման բովանդակությամբ մի հատված առկա է նաև Դավիթ Անհաղթի «Արիստոտելի Ստորոգությունների մեկնության» մեջ (տե՛ս Էլիասի իմաստասիրի Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, Ի լոյս էած Յ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 148)։

ըստ հեղինակի հայտնի լինելու. «Յիրաւի և հարազատութիւնն խնդրի. վասն զի գիտելով՝ եթէ հարազատ է առաջիկայ շարագրածն, զգիտութեան փառս ունողի վարդապետին յօժարութեամբ ընթեռնումք, վասն զի բազումք ոչ գոլով կարօղք զճշմարիտն և զսուտն որոշել՝ զպիտանացուն և զանպէտն, լաւ համարին վասն պատուոյ և ճոխութեան վարդապետին յօժարագոյնս ընթեռնուլ, և որպէս սիրելի ինչ վարկանին զհետևիլն կարծեաց վարդապետին»²:

Ըստ Ղափթի՝ երկերը կարող են կեղծ լինել «վասն հոմանունութեան շարագրողաց, և կամ վասն հոմանունութեան շարագրածաց»: Խոսելով հեղինակների համանունության մասին՝ նա բերում է հետևյալ օրինակը. երբ նույն անունն ունեցող երկու անձնավորություններից մեկն աշխատություն է գրում «Հոգու մասին», մյուսը՝ «Երկնքի մասին», կամ էլ եթե երկու տարբեր հեղինակներ գրում են կա՛մ հոգու, կա՛մ երկնքի մասին, այսինքն՝ միևնույն նյութի վերաբերյալ, այդ դեպքում «ոչ ոք կարող գոյ որոշել՝ կամ զնորայն սորա կարծելով, կամ զսորայն նորա»: Երկրորդ դեպքում սնափառ, պատվասեր հեղինակները, ովքեր, սակայն չունեն փառք և համբավ, իրենց գրվածքների վրա դնում են որևէ հայտնի վարդապետի անունը՝ փորձելով տարածել դրանք: Երրորդ դեպքում Ղափթն օրինակ է բերում պատմությունից: Ցանկանալով հավաքել Հոմերոսի բոլոր բանաստեղծությունները՝ Աթենքի կառավարիչ Պիսիստրատը դրանք հայտնաբերողներին և իրեն տրամադրողներին առատ վարձատրություն էր տալիս: Շահադիտական նկատառումներով շատերն իրենք էին բանաստեղծություններ հորինում՝ դրանք ներկայացնելով որպես Հոմերոսինը: Իսկ չորրորդ՝ մեզ առավելապես հետաքրքրող եղանակն այն է, երբ «վասն բա-

² Ղափթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 107-108:

րենտության աշակերտաց առ իւրեանց վարդապետսն. գրեն շարագրածս ոմանս, և մակագրեն զանուն վարդապետին», ինչպես Պլատոնն իր ստեղծագործությունների վրա դրեց Սոկրատի անունը, իսկ այլոթագորականները՝ Պյութագորասի անունը «Ոսկի առակներ» կոչված երկի վրա: Այնուհետև Դավիթը նշում է, որ կեղծ ստեղծագործությունները կարելի է զատորոշել և ճանաչել ըստ նյութի և ըստ ձևի, այսինքն՝ ըստ կառուցվածքի, բառապաշարի և ըստ հեղինակի մտածելակերպի³:

Փաստորեն՝ միջնադարում գործել են երկի վերագրման հստակ օրենքներ, և հետաքրքրական է, որ թվարկվում են նաև դրանք բացահայտելու հստակ մեթոդները: Ինչպես տեսնում ենք Դավթի մատնանշած օրինակներից, կեղծ հեղինակային պատկանելության հարցը, ինչպես նաև դրանց բացահայտման մեթոդները միայն զուտ քրիստոնեական երևույթ չեն: Ի դեպ, այս հարցին քրիստոնեական պատմագրության օրինակով անդրադարձել է պատմաբան Էռնա Շիրինյանը⁴:

Փորձենք պարզել, թե, վերոնշյալ վերագրման կանոններից որոնք և ինչ սկզբունքով են կիրառվել Դավիթ Անհաղթի դեպքում:

XIV–XV դդ. աստվածաբան, տաղերգու Առաքել Սյունեցու «Պատճառ Սահմանաց գրոց»-ում կարդում ենք. «Թէ քանի՞ գիրք գրեաց (Դավիթ Անհաղթը – Ա. Մ.). այսինքն Ե (5). ա. զՍահմանքս, բ. զԲարձրացուցէքն, գ. զՊէտքն. դ. Ձմեկնութիւն Քերականին, ե. զՍեկնութիւն Պորփիրի եւ զԱրիստոտելի»⁵:

³ Նույն տեղում, էջ 108:

⁴ Տե՛ս Շիրինեան Ա. (Է.), Փոխարկութիւնները Քրիստոնեական պատմագրութեան մէջ, "Bnagıraq Yisatakac (documenta memoriae)", a cura di Valentina Calzolari, Ann Sirinian, Boghos Levon Zekıyan, Bologna, 2004, էջ 241–253:

⁵ Առաքել Սիւնեցոյ Սեկնութիւն Սահմանաց գրոցն Դաւթի, Մաղրաս, 1797, էջ 169–172:

Իսկ «Սահմանք իմաստասիրութեան» երկի պատճառներից մեկում ասվում է. «Եւ թէ ոք հարցանէ, թէ ի վերնագիրն զիւր անունն ընդէր ոչ է եղեալ, թէ նորա արարած է այս գիրք: Վասն զի ոչ ունէին հպարտ ազգս հայոց զիմաստս վարդապետաց իւրեանց, ոչ եղ զանունն, զի մի կորուսցեն եւ կամ մի առաւել պատուեսցեն այլք: Իսկ ի Բարձրացուցեացն սկիզբն յետոյ եղին զնորա անունն եւ Սահմանաց գիրս ոչ գտեալ եղեւ յայնժամ եւ այլ յետոյ չարարին փոյթ դնել զանուն նորա: Ասաց սա չորս գիրքն. առաջին՝ զԲարձրացուցէքն, երկրորդ՝ զՍահմանացն, երրորդ՝ զՔերականին մեկնիչն, չորրորդ՝ զՊէտքն, գոն եւ առանձինն այլ ճառեր, արար իինգերորդ՝ եւ սաղմոսին պատճառ, եւ զի ոչ գոյր փափագանօք խնդրող, վասն այն եւ նա ոչ արար գիրք այլ, զի մի նախատեսցի, որպէս յառաջդ ասացաք: Ապա թէ ոչ իմաստուն էր առաւել քան զառաւել»⁶: Ինչպես տեսնում ենք, միջնադարում նույնպես քննել են, թե արդյո՞ք այս երկերը Ղափթին են պատկանում, թե՛ ոչ, և եթե նրանն են, ինչու՞ վերնագրում նշված չէ նրա անունը, այլ՝ հետագայում է ավելացվել: Տրվող բացատրությունը հետևյալն է՝ որպեսզի նրա երկերը կորստյան չմատնվեն իր հակառակորդների կողմից, կամ էլ առավել պատվի չարժանանան իրեն սիրողների կողմից: Այդուհանդերձ, կարևոր է այն հանգամանքը, որ «հունաբան դպրոցի անձնվեր ներկայացուցիչները կարևոր չէին համարում նշել իրենց անունները»⁷, իրենց գործն աստվածահաճո համարելով:

Բացի վերոնշյալ պատճառներում նշված երկերից («Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ», որ առավել հայտնի է սկսվածքի առաջին բառով՝ «Բարձրացուցէք», «Սահմանք

⁶ Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, XXXII–XXXIV.

⁷ Շիրինյան Մ. (է.), Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, Երևան, 2005, էջ 117:

իմաստասիրութեան», Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ Զերականութեան» երկի մեկնության, «Գիրք Պիտոյից», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» և «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփյուրի», Սաղմոսների մեկնություն), Դավթի անունով հայտնի են նաև Կաթողիկե եկեղեցուն նվիրված ներբողը, «Առածք հինգ» և «Վասն բաժանման» մանր գրվածքները: Նրան վերագրվում են նաև «Էակաց գիրքը», ինչպես նաև՝ Պորփյուրի «Ներածության», Արիստոտելի «Ստորոգությունների» և «Յաղագս մեկնութեան», Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» երկերի թարգմանությունները: Անշուշտ, այս երկերից որոշների հեղինակն իսկապես Դավիթ Անհաղթ փիլիսոփան է, սակայն ոչ բոլորինը: Այսօր մասնագետների կողմից հիմնականում ընդունվում է չորս հայտնի փիլիսոփայական երկերի («Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի», «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի» և «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի») Անհաղթի հեղինակ լինելը:

Ե՞րբ, ու՞մ կողմից են գրվել կամ թարգմանվել և ինչ սկզբունքով են վերոնշյալ երկերը վերագրվել Դավիթ Անհաղթին: Հիմնվելով «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» երկում նշված մեթոդների վրա՝ կարող ենք ենթադրել, թե գուցե՝ ոմանք փառասիրության պատճառով են իրենց երկերի վրա դրել Դավթի անունը, կամ, հնարավոր է, որ Դավթի աշակերտներն⁸ իրենց ուսուցչի հանդեպ ունեցած բարեմտության պատճառով նրա անունն էին դնում իրենց երկերի վրա: Հիշենք նաև, որ միջնադարում տարբեր Դավիթներ են ապրել,

⁸ Աշակերտ ասելով նկատի ունենք նաև հետագա դարերում նրանից ազդված հեղինակներին:

որոնք միաժամանակ փիլիսոփաներ են եղել⁹, ինչը հետագա դարերի մատենագիրների երկերում կարող էր շփոթմունքի պատճառ դառնալ: Մեկ այլ, մեր կարծիքով շատ հավանական, տարբերակ է այն, որ դավանաբանական աշխատությունները պետք է տարածվեին և ճանաչվեին փիլիսոփայական, ըստ ավանդության նաև դավանաբանական վիճաբանություններում հաղթած փիլիսոփայի անունով, ով հայտնի էր նաև Հայաստանի սահմաններից դուրս: Այսինքն՝ տվյալ դեպքում նույնիսկ նրան երկերի վերագրումը որոշակի նպատակ է հետապնդել:

Հետաքրքրական կլինի պարզել նաև, թե Ղավթին վերագրված երկերից յուրաքանչյուրը մոտավորապես որ շրջանից է հանդես գալիս ձեռագրերում նրա անունով: Իհարկե, այս հարցը միայն մասամբ կարող է գտնել իր պատասխանը, եթե հաշվի առնենք, որ դարերի ընթացքում հազարավոր ձեռագրեր են կորել: Կարծում ենք՝ այս փաստը կարող է սերտորեն կապված լինել որևէ ժամանակաշրջանում դավանաբանական վեճերի սրման և այս նպատակով կրկին Ղավթին «վերհանելու» կարևորության հետ:

Այս տեսակետից ուշագրավ է նաև ձեռագիր ժողովածուների կազմման սկզբունքները, ինչը ևս քիչ ուսումնասիրված հարց է գիտության մեջ: Բացի փիլիսոփայական ժողովածուներից, Ղավթին վերագրվող թե՛ փիլիսոփայական, թե՛ կրոնական երկերը ներառված են նաև դավանաբանական-աստվածաբանական բնույթի ժողովածուներում՝ հատկապես հակաքաղկեդոնական երկերի կողքին: Բացի զուտ դավանաբանական կարևորությունից, նրա փիլիսոփայական երկերին տրվել են բարոյագիտական, աստվածաբանական ուղղվածություն և

⁹ Տարբեր Ղավթների մասին տե՛ս Չալոյան Վ., Ղավթ Անհաղթ (բանասիրական ակնարկ), «Պատմա-բանասիրական հանդես», 1980, N 1, էջ 52–62:

նույնիսկ փիլիսոփայական երկերն ուղղակիորեն դրվել են «քրիստոնեական կաղապարի մեջ»: Այսպես՝ գրեթե բոլոր ձեռագրերում «Սահմանք իմաստասիրութեան» երկին հաջորդում է «Նորին (Դաւթի Անյաղթի – Ա. Մ.) Ամենայն չար տանջելի» փոքրիկ գրվածքը¹⁰, որը կարծես դիտվել է որպես «Սահմանք»-ի ուղղակի շարունակություն և երբեմն նույնիսկ հանդես է գալիս առանց խորագրի¹¹: «Սահմանք իմաստասիրութեան» երկն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «...որպէս զի մի սուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք և մի չար գործեսցուք»¹²: Այստեղ շատ «համահունչ է» «Ամենայն չար տանջելի» խորագրով կամ, ավելի ճիշտ, սկսվածքով երկը, որն ավարտվում է այսպես. «Այս գծածք հանդիսադիր խմբի յառաջագոյն տառից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ներթողեալ ի Դաւթ եռամեծէ ենթադրեցաւ»¹³: «Ենթադրեցաւ» եզրը, որը հաճախ հանդիպում է նաև «ընթադրեցաւ» ձևով, հունարեն «*υποθετομαι*» բառն է և նշանակում է կարգել, հանգուցանել, հաստատել¹⁴: Այսինքն՝ թեև խորագրում նշվում է «Դաւթի Անյաղթի...», վերջին հատվածից և հատկապես «ենթադրեցաւ» եզրից կարելի է հասկանալ, որ Դավիթը ոչ թե հեղինակել, այլ «կարգել է» այս գրվածքը որպես «Սահմանք իմաստասիրութեան» երկի շարունակություն կամ հաջորդող

¹⁰ Հունական և լատինական աղբյուրներում այս երկը հայտնի է Գրիգոր Նյուսացու անունով:

¹¹ Ներսես Շնորհալին մեկնել է «Ամենայն չար տանջելի»-ն որպես «Սահմանք իմաստասիրության» երկի վերջին գլուխ (Տե՛ս «Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և ատուածաբան վարդապետի, Կ.Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու», 1731 թ., էջ 287–290):

¹² Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, էջ 104:

¹³ Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 216:

¹⁴ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 658:

երկ¹⁵: Իհարկե, այս կաղապարն այնքան էլ օտար չէ նորալատոնական՝ փիլիսոփա Ղավթին, ում համար փիլիսոփայությունն ինքնանպատակ չէ, այլ միտված է մարդու հոգին մաքրելու, բարձրացնելու, առավել բարի դարձնելու, դեպի աստվածանմանություն տանելու:

Ուշադրության արժանի են նաև ձեռագրերում Ղավթի երկերի խորագրերը, որոնք անշուշտ, հետագա հավելումներ են և միջնադարյան հեղինակների՝ Ղավթի հանդեպ ունեցած վերաբերմունքի շատ խոսուն վկայություն են հանդիսանում: Բացի «Անյաղթ փիլիսոփա» պատվանունից, օրինակ՝ «Սահմանք իմաստասիրութեան» երկի խորագրում Ղավթին անվանվում է «աստվածասեր և աստվածախոհ փիլիսոփա»: Այսինքն՝ Ղավթը դիտվել է որպես քրիստոնյա-աստվածաբան-փիլիսոփա: Մեր կարծիքով՝ շատ կարևոր է այն հանգամանքը, որն, ի դեպ, հաճախ անտեսվել է մասնագետների կողմից, որ Ղավթը սրբադասվել է Հայ եկեղեցու կողմից: Ղավթի տոնը նշվում է Թարգմանչաց կանոնի մեջ՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու հետ միասին: Ե՞րբ, ինչու՞ և ու՞մ կողմից է սրբադասվել Ղավթը Անհաղթը: Հայոց եկեղեցում սրբադասման հստակ կանոնի բացակայության պատճառով այս հարցը շատ խրթին է, այնուամենայնիվ հետազայում փորձելու ենք ինչ որ լուծումներ և հնարավոր տարբերակներ առաջարկել:

¹⁵ Ամենայն հավանականությամբ այս երկը ոչ թե Ղավթի կողմից, այլ ավելի ուշ շրջանում է կցվել Սահմանքին, սակայն այս դեպքում էլ երկի «կարգումն» է վերագրվում Ղավթին: «Ամենայն չար տանջելի»-ն տեղ է գտել Մխիթարյան հայրերի կողմից լույս ընծայված Ղավթ Անհաղթի մատենագրության մեջ՝ հաջորդելով «Սահմանք իմաստասիրութեան» երկին (տե՛ս Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Ղաւթի Անյաղթի մատենագրութիւնը, էջ 215–216): Սեն Արևշատյանի կազմած քննական բնագրում այս հատվածը ներառված չէ՝ չնայած օգտագործված ձեռագրերում այն առկա է (Ղաւթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայական, Երևան, 1980):

Սակայն, այժմ անդրադառնանք այն հարցին, թե Ղափիթն ինչու կարող էր սրբադասվել եկեղեցու կողմից:

Ղափիթ Անհաղթը Հայաստանում փիլիսոփայական դպրոցի հիմնադիրն էր: Այդ դպրոցի շնորհիվ թարգմանվեցին, մեկնվեցին երկեր, որոնցում մշակվեցին այն սկզբունքները, փիլիսոփայական եզրերը, որոնց շնորհիվ Հայոց եկեղեցին կարողացավ ունենալ ամուր դավանաբանական համակարգ: Չպետք է մոռանալ, որ միջնադարում ամեն բան արվել է Հայոց եկեղեցու դավանաբանությունը պաշտպանելու նպատակով: Փիլիսոփայական երկերի թարգմանությունը, փիլիսոփայական տերմինների յուրացումը նույնպես նպատակ ուներ ամրապնդել եկեղեցու դավանաբանությունը, որով նա պետք է արիստոտելյան և պլատոնյան փիլիսոփայության հզոր զենքերով պաշտպանվեր քաղկեդոնական եկեղեցու և նրան աջակցող Բյուզանդական կայսրության ուժեղ ազդեցությունից: Սակայն արդյո՞ք փիլիսոփայական երկերի առկայությունը բավարար պայման կարող էր լինել Ղափիթի սրբադասման համար: Տրամաբանական է, որ նա պետք է ունենար նաև աստվածաբանական բնույթի երկեր և այդպիսիք կան մեր մատենագրության մեջ: Տվյալ դեպքում կարևոր չէ, թե Ղափիթ Անհաղթին վերագրվող աստվածաբանական երկերն իսկապես նրա գրչին են պատկանում, թե՛ ոչ, այլ այն, որ եկեղեցին սրբադասել է հենց այդ երկերի հեղինակ Ղափիթին:

Միջնադարյան հեղինակները, ընդունելով հանդերձ Ղափիթ Անհաղթ փիլիսոփայի բացարձակ հեղինակությունը, այնուամենայնիվ, փորձել են ճշտել նրա անձի և գրական ժառանգության հետ կապված խնդրները: Ի դեպ, այդ հեղինակները (Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Վարդան Հաղբատեցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Ներսես Շնորհալի, Առաքել Սյունեցի և այլք), որոնց երկերն այժմ մեզ համար աղբյուր են

հանդիսանում, իրենց ժամանակներում Ղափիս Անհաղթին առնչվող «մութ» հարցերի ուսումնասիրողներ են եղել: Նրանք փորձել են գրավոր աղբյուրներից, բանավոր ավանդագրույցներից գտնել և վերհանել Ղափիս մասին ճշմարտությունը:

Այսպիսով, կարևոր է Ղափիս Անհաղթ փիլիսոփայի թե՛ կյանքին և թե՛ գրական ժառանգությանն առնչվող խնդիրներն ուսումնասիրելիս հաշվի առնել միջնադարյան ընկալումները, մոտեցումները և դրանք քննել միաժամանակ պատմական, աստվածաբանական, բանասիրական, տեսանկյուններից:

АРМИНЕ МЕЛКОНЯН

К ВОПРОСУ О ПОДЛИННОСТИ ТРУДОВ ПРИПИСЫВАЕМЫХ ДАВИДУ АНАХТУ

РЕЗЮМЕ

В средневековой армянской литературе многие философские и богословские сочинения были приписаны философу Давиду Анахту (Непобедимый). Его канонизация со стороны Армянской церкви означает, что кроме философских трудов он является также автором богословских трудов. В статье рассматривается вопрос аутентичности и атрибуции некоторых произведений Давида Анахта. Касаясь принципов составления армянских рукописей отмечается, что кроме философских, также и философско-теологические работы Анахта включены в догматические-богословские сборники. Даже если Давид Анахт и не является автором приписываемых ему всех философских и богословских сочинений, это имело особое значение и цель.

ON THE PROBLEM OF AUTHENTICITY OF THE
WORKS ATTRIBUTED TO DAVID THE INVINCIBLE

SUMMARY

In the medieval Armenian literature many philosophical and theological writings have been attributed to David the Invincible philosopher. His canonization by the Armenian church implies that he must have made a significant contribution to the Armenian Church: it also raises the question that except philosophical writings he is the author of theological works as well. Touching upon the principles of composing Armenian manuscripts, it is noticed that except the philosophical collections David's works (both philosophical and religious) are included in the dogmatic-theological miscellanies especially with the anti-Calcedonian writings. Even if David is not the author of all the philosophical and theological writings attributed to him, the ascription had a special purpose and importance.